Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք!

ՎՐԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏ-ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ

№ 5 ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ № 5

891.99
Ս-50

ՎԱՐԴԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՎԵՐԵԼՔԻՆ

A 6052

ԹԻՖԼԻՍ
1929

ԳԼԱՎԼԻՏ № 613 ՏԻՐԱԺ 1000.

ՊՈԼԻԳՐԱՖՏՐԵՍՏԻ 5-ՐԴ ՏՊԱՐԱՆ, ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ № 68.

## ՓՈՂՈՑԸ Ե՛Ն ՉԵ...

### (ՄԱՅԻՍՅԱՆ ՅԵՐԳԵՐԻՑ)

*Փողոցը ե՛ն չե խառը,*
*Փողոցը նիրհո՛ւմ, անկայծ...*
*Շնչում ե արևով բոսոր*
*Հիմի նա սրտերում մարդկանց...*

*Միլիոնն իմ միաձույլ, մի կամք*
*Ցոլել ե մեյդան խինդի.*
*Թնդում են դրոշներն անգամ՝*
*— Կարմիր ծիածան գնդի՛ն...*

*Մայիս ե... գարո՛ւն... բերկրո՛ւմ...*
*Մայիսը մայիսին ողակ.*
*Յես իմ շատ գարունն եմ յերգում,*
*Մանկերդը կուլակի քողարկ։*

*Ցնծում են արևականչում*
*Հրկեզ ընկերներն իմ հոծ,*
*Բայց...*
*դեռ հեռու մի լանջում*
*Նվո՛ւմ ե մի այլ փողոց...*

*Փողոցն այդ հմլած յերկաթ*
*Ջաւոդ արև կրծքում ինձ հետ*

Հնչում է ինտերնացիոնալ՝
Քրաներգը հորդ հոսող մի գետ։

Փողոցն իմ էն չէ հար...
Փողոցը նվա՛ղ, անկա՛յծ...
Շնչում է արևով բոսոր
Ու ծփում սրտերում մարդկանց...

1926 թ.

# ԼԵՆԻՆԻՆ

Զանգերը՛...
Տիտան զանգերը՛...
Պոեմի հանգեր չեն,
　　վոր գան ու շարվեն ուզածիդ չափ.
Լուսե մի զանգ էր Նա...
Միտք էր Լենինը՛...
Դարերով կոփված համաչափ...

*
* *

Վհուկ դասակարգ մի ծեր,
Վորպես դեղին մի ժանգ,
Վորպես արնախում ուրու,
Նստել ու ծծում էր անջանք
Հոսող քրտինքն իմ այտերու...

Դարերը ցասում փնջեցին,
Ու որերը մթնշաղ...
Եվ որհասով մահառիթ,
Տվին Իլիչին ազդանշան՝
— Արի,
Հորձանքը մեր ղեկավարի...

Ու վորպես աննահանջ պահակ,
Վորպես կամքն իմ պանծալի

Կանգնած է Իլիչն ահա,
Նշում է ճամբաները գալիք...

*
* *

Դարերի խոսք էր Լենինը տիտան,
Երկաթաձույլ հսկա մի միտք.
Դարերն ակնածու հարգանք կտան
Ու կունկնդրեն,
վոնց յես հիմի...

1928 թ.

## ԵՆ, ՎՈՐ ՏԵՍԱ՛Ք...

*Ե՛ն,*
*Վոր տեսաք*
*Ու ծծեցիք*
*Ժահրը խոշտանգ, հին օրերի,*
*Ցելե՛ք,*
*Ցելե՛ք,*
*Հաղթանակի վրա համերգում*
*Ձենը յերգենք Հոկտեմբերի...*

*
* *

*Գիշեր եր ե՛ն,*
*Մահասարսուռ,*
*Մուրճ ու մանգաղ հլու գերի...*
*Գիշեր եր խե՛նթ,*
*Հեծեծա՛նք, տե՛նդ...*
*Անհուն յերազ նոր տեմպերի...*
*Տեմպը, հոգիս,*
*Կամքն եր իմ հուր.*
*Կամքս՝ պայքար ընդդեմ հնի*
*Ու որհասում*
*Ընդվզումի*
*Ծնունդ տվի Մեծ Լենինին...*

Գոռ պայքարում
Լուսաբորբոք
Ընկավ Լենին՝ կուռ ղեկավար,
Ցավ արթնացած
Մուրճերը մութ
Վողջո՜ւյն տային արևին վառ...

*
* *

...Ու միլիոններ յելան վոտքի,
Քանի՜, քանի՜ հերոս ընկա՜ն...
Հորիզոնի նենգոտ շողքին
Քանի՜ հեղ մայր խփեց ծնկան...
Ու յերբ ժպտաց շող արշալո՜ւյս
Յերգը հնչեց աշխատանքի,
Փարիզ, Լոնդոն դարանամուտ
Ձեռք զարկեցին
Ռումբի,
Տանկի...
Կապիտալի խենթ գրոհում
Քանի՜ կարմիր հերոս ընկան...
Վորպես կակաչ դաշտում խոհուն
Քամհար ընկա՜ն...
ու ել չկա՜ն...
Հերոսների արյան ներկով
Շունչ է առել մի նոր արև

Որն է զնգում մի նոր յերգով,
Ու ափից-ափ ղրկում բարև...
Կանչ է հիմա
Որս ցասկոտ
Աշխատանքի հոծ շարքերի,
Վոր շինարար մեր կուռ բազկով
Ստեղծենք աշխարհն մի անթերի...

*
* *

Ե՛ն,
Վաշ տեսաք,
Ու ծծեցիք
Ժանրը խոշտանգ, հին օրերի,
Ցելե՛ք,
Ցելե՛ք,
Հաղթանակի վես համերգում
Ձոնը յերգենք Հոկտեմբերի...

1927 թ. հոկտեմբեր

# ԻՄ ՅԵՐԳԸ

*Ինչքա՜ն ել ծեր աշունն իր թևերը ցուրտ*
*Փռե արթնացող աշխարհի վրա,*
*Յերեր հողում մեջ մութ, անհրապույր*
*Ծավալե անշուք գորշ մեգը իրա...*

*Ինչքա՜ն ել պուրպուր յերկնակամարեն*
*Սև ու խելահեղ ամպերը սողան,*
*Ու Ջեմբերլենը նուրբ ցանցով փարե*
*Գենսավեսը քո՝ կամքդ հողմահար...*

*Յես պիտի յերգեմ յերգը յերկաթի,*
*Ըմբոստ մեղեդին նրա ճռինչի.*
*Յես պիտի յերգեմ...*
*մինչ քո ճակատին*
*Իմ վառ արևի ցոլքը ճաճանչի...*

*Սիրել եմ քրտնի ցոլքերը լուսե*
*Դեմքերը ակոսող կայլակը սահուն*
*Սիրել եմ նրանց, վոր դիտեն հյուսել*
*Տիտան Զորավես թափով ժիր, կայուն...*

*Ու յերբ կայանքես լույսերը շող-շող*
*Անտես թելերով աշխարհը փարեն,*
*Գիտեմ...*

Ամպերը մթին, սիրտ մաշող
Գիտ ցնցեն հողուդ յերկնակամարեն։

Թող վոր աշունը իր թևերն անույժ
Փռե արթնացող աշխարհի վրա.
Իմ յերգը ել՛ յերկաթն ե աշխույժ,
Հաղթական յերթը ու կանչը՛ նրա…

1927 թ.

---

# ՄՇՈ՛ՒՇ

*Ասա՛, դու չե՞ս,*
*Վար լուռ, անտես,*
*Ո՛ւշ ու մշո՛ւշ գիշերում,*
*Ինձ կանչում ես,*
*Ու հանգչում ես*
*Իմ վոսկեհուռ հուշերում...*

*Ասա՛, դու չե՞ս,*
*Վոր՝ զավկոմի*
*Են դրնդուն նիստերում*
*Դիմքիդ թախծով*
*Մտքերս ծով*
*Խլում, տանում ես հեռո՜ւն..*

*Յերբ բջիջում,*
*Նուրբ խճիճում*
*Մրրկացող մեր ուրի,*
*Հույզի բորբոք*
*Լույսն եմ վառում*
*Ծարավ սրտում բոլորի...*

*Ասա՛, դու չե՞ս,*
*Ելեկտրի պես*
*Փռվում սրտիս ծալքերում*

Ու իմ հոգում
Հույզ ու խոկում
Հրավառում մեղմ, թերհույս...

Իմ բոլոր կյանքի
Հորդ հոսանքի
Շռի՛նդ, վարա՛ր այս գետում
Ի՛նչու հոգուս
Անձև աչքով
Մերթ քե՛զ...
Մերթ քե՛զ եմ դիտում...

Ասա, դու չե՞ս,
Վոր լուռ, անտես
Ո՛ւշ ու մշո՛ւշ գիշերում,
Ինձ կանչում ես,
Ու հանգչում ես
Իմ վոսկեհուռ հուշերում...

1926 թ.

# ԿՈՄՍՈՄՈԼ ՍՈՆԵՆ

Հուսինանց Սոնեն
Էն հուր ու մալաք,
Դալողը վո՞նց սախ,
Վոր դուք խմանաք...

Յերեկ նա «թմփած»
Մի աղջիկ ջահել,
Եսոր կոմսոմոլ
Խելոք, վոնց ահել։

Հացի կարիքից
Նա շատ եր մաշվել
Վերջում գավառը
Իր ծոցն եր քաշել։

Ու նա գործարանն
Հենց նոր կրնկած,
Ասես, դազգյահը -
Անգճին շշնջաց—

Թե՝—կա անարդար
Մի շուն դասակարգ,

Վոր բուռն է առել
Աշխարհնում սարք-կարգ․

Թե՝—նա չի նայում
Այլ մարդ էս թե կին
Անկուշտ ծծում է
Բրտինքն ամենքի։

Ու լեղու դառած
Մեր Սոնեն «թմփած»
Ցասում է քամում
Խոսքով մոքաբայց։

Մենակ Հուռին է՝
Մայրը միշտ դժգոհ
Ղալմաղալ սարքում
Ամեն ցերեկը—

Ա՛ղջի, կապ կտրած
Ո՞ւր ես կորչում, մուր...
Ճամբեդ պահելով
Աչքս դառավ ջուր...

Եդ տղերանց հետ
Բանի՞ թրև գաս,
Ես անեմ սրիս
Մխոքս խոխիլ տաս...

...Ու դարդի ամպ է
Ընկնում Սոնի վրան,
Թե վոնց հասկացնի
Էն պառավ կնկան—

Վոր կա անարդար
Մի շուն դասակարգ,
Վոր քուռն է առել
Աշխարհնում սարք-կարգ.

Թե՝ պիտ հարվածեն
Աղջիկ թե տղա,
Մինչ հետքը յերկրից
Անդարձ չքանա...

1925 թ.

# ՅԵՐԲ ԴՈՒՌԸ ԲԱՑԻՐ

Յերբ դուռը բացիր, ներս մտար հանկարծ,
Վորպես հոգեթով մի լույս ինձ փարող,
Ո՜, աչքերիդ մեջ փայլում եր մի կայծ,
Դեմքիդ այնքա՜ն խինդ ու այնքա՜ն կարոտ...

Ներս մտար, քույր իմ, ժպտուն մոտեցար,
Սեղանիս վրա պորտֆելդ բացիր,
—Սկսենք—ասիր. ու մի անուշ ցավ
Պարուրեց հոգիս խորո՜ւնկ ու անծի՜ր...

Ձինջ աչքերիդ մեջ, լազուր ու խայտուն,
Շողաց քեզ այրող կայծը կրակի.
Բջիջի հրահանգն եր, վոր մենք՝ յես ու դու
Շեֆգյուղի համար գծենք ծրագիր։

Ո՜, ինչքան քաղցր ե, քույր իմ, միասին
Նստել ու նշել գալիքի ուղին.
Լենինից հետո շատ շատերն ասին,
Վոր յելնում ե ծույլ խավարը գյուղի։

Ո՜, գիտեմ, քույր իմ, յերկաթականչից
Գյուղը կազատվի հեքիաթ անուրջեն.

П 6052

Տեքստիլս առատ կտա նրան չիթ
Ու մի որ գյուղում գուդոկ կհնչե...

Ժամերը անթարթ թռան ու անցան,
Թերթիդ հարցաշարն վերջացավ ահա.
Բայց իմ ուղեղում՝ վոլոր մի կածան,
Ու վորոնում եմ յես ելքի մի հարց—

Այդքան բորբ յեռանդ, այդքան մտորում
Ո՞վ բարդեց եդ քո քնքույշ ուսերուն.
Ինձ դուցե քո ծով յեռանդն է թալկում,
Գուցե արևշող հոգիդ եմ սիրում...

Ու յերբ ներս յեկար, քու՛յր իմ, դու հանկարծ,
Սենյակիս արևեց սիրաշունչ մի տոթ,
Ո՛, քո աչքերում խաղում եր մի կայծ,
Դեմքիդ այնքա՛ն խինդ ու անքա՛ն կարոտ...

1929 թ.

# ԸՆԿԵ՛Ր...

*(Նվեր կանանց միջազգային օրվան)*

*Դարերի մորակը քեզ պահեց,*
*Կին,*
*Լվացքի տաշտին,*
*Սուպի կաթսային,*
*Հին աշխարհը ծնեց քեզ ստրուկ*
*Իր գրկի,*
*Կրքի*
*Արդ ու զարդի,*
*Վար հարթի*
*Իր մեղքը վավաշոտ*
*Ժանգոտ, գընդուն*
*Մետաղի ուժով...*

*Այսօր*
*Քո հոգին կարմիր լուսարձակ.*
*Ու մեծ պայքարում*
*Դու ինձ հետ գզորդ*
*Հարթում ես արդեն ճամբաներ*
*արձակ,*
*Ուղիներում մութ, ինչպես հին*
*լուսորդ...*

Տես…
Արևելքի քնձոտ մինարին
Եվ չի ունկնդրում չաղրաթող բաջին,
Թույն է գրկել նա աչքերով նարինջ
… ու հողին խիղճն,
Պատրաստ քո կանչին…
Յեվ, ընկեր…
Շաղախիր թույն ու բողոք
Իմ,
Քո
Շնչով անողոք,
Անսանձ վրեժի,
Պայքարի բովում
Հավասարության աշխարհն է կոփ-
վում…
Այնտեղ
Դու չես լինի ստրուկ
Գրկի,
Վավաշոտ կրքի…
1925 թ.

# ԳՈՐԾԱԶՈՒՐԿԸ

Գործազուրկ եմ յես
Գրված բորսայում,
Բայց բա՜խտս... բա՜խտս...
Տես, վո՞նց ե սահում...

Ի՞նչ... փողի համար
Քաշեմ յես նեղ ձր...
Բա յերբ ինձ պետք գա
Խնամի Յեղոն...

Բորսան գնացի,
Ցուցակագրեց.
Անհերթ գրքույկ մի
Իմ ծոցը դրեց:

Բայց գրքույկն ինձ
Նաղդ փարա կտա՞...
Բութ, կույր հավատքից
Ինչի՞ մղկտամ...

Խնամուս դյութիչ
Հոգատար աչքի տակ,
Ցես յեկամուտի
Չաղ աղբյուր գտա..

Գրքույկը ինձի
Պահապան մի շող,
Ասի—յեկ գաղտնի
Պահեմ «պարի շվո»։

Յես գյուտարար չեմ
Ապագաս նշող.
Զի՞ վոր մարդ պետք է
Ապրե քիչ հաշվով․․,

Յեռում է կյանքը
«Պարի շվոյում»
Ու հաստ վոսկին
Իմ սիրտը շոյում։

Բայց յես․․․ ելի՛ դեռ
Խեղճ «գործազուրկ եմ»,
Ո՞վ է գիտի, թե
Ջրասույզ ձուկ եմ․․․

Վոչ մի հաճույքից
Անմաս չեմ մնա,
Միայն․․․ զգույշ քիչ,
Բոսսան չիմանա․․․

Թաքցնում յես մեջս
Առաջին կարգում,
Իմ նազ տարփուհուն
Այդպես եմ հարգում․․․

Ա՜խ... թե նա հանկարծ,
Դրդված սիրուց ժիր,
Պահանջե անդարձ
Հյուրանոց, ուժին...

Ո՜... չես սիրակեղ,
Անսափոփ թռչուն,
Վոսկի կշաղեմ·
Իր սիրո փնջում...

Իսկ յերբ գա պարետ
Ու լուրջ թակի դուռ,
Թե—դու մասնակի
Հաշվով քրեհ տուր...

Յես կբողոքեմ...
— Ի՞նչ... ձայ գրքույկ,
Խնդրեմ ինձ հաշվեք
Հավետ պարծազուրկ...

1928 թ.

# ՄԵՂԱ՜ ՔԵԶ...

*Մեղա՜ քեզ...*
*Մեղա՜...*
*Տե՛ր, ես ի՞նչ յեղա.*
*Բախտից հալածված,*
*Մնացել եմ անհաց...*

*Թե մտածում եմ՝*
*Սև շորս փոխեմ,*
*Ո՞վ պաշտոն կտա*
*Քիթս ձեռ կոխեմ...*

*Մոռցած սուրբերիս՝*
*Սուրբ Գրիգոր, Աբեթ*
*Վճռել եմ հիմի*
*Դառնալ վարժապետ։*

*Մենակ թե թողնեն,*
*Աշխատեմ, վոնց ուզա,*
*Ու լցնել չտան*
*Անկետ, հարցաթուղթ..*

*— «Ո՞վ էյիր անցյալում»*
*Կամ—«Ո՞վ քու հեր, պապդ».*

Ո՞ւմ են պետք դալու
Հարցերըն եղ յարաք...

Խոսք եմ տալիս, խոսք
Հանուն յոլթվերքի,
Վոր դասարանում
Սաղմոս. չեմ յերգի...

Թե չէ ինչ անեմ,
Գնամ, դառնամ չարչի...
Ախր չի՞ կարգիս
Հեչ տաղական չի...

Մեղա՜ քեզ...
Մեղա՜...
Տե՛ր, ես ինչ յեկա
Մինչ յե՞րբ բերան բաց
Մնամ յես քաղցած...

1927 Թ. դեկտեմբեր.

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Որերն անցան հողմահալած, մութ որեր…*
*Հսկում էր քեզ բութ, ռազմաշունչ մի դաշույն*
*Փողոցիդ մեջ զուլումի յերգը արնոտ*
*Ու քո կրծքում դեռ անձրև էր… ու աշուն։*

*Մերկ, ամայի քո դաշտերում յերազուն*
*Յերգն էր լքել շինականի սրինգը.*
*Հազար-հազար թափառական մանկտուն*
*Տրորվեցին ու կախ ընկան փեշերից քո։*

*Ինչքան [illegible] խենթ սուրացին քո լանջով,*
*Դարան մտած դավ նյութեցին ու անցան,*
*Անձրևաբեր թուխպ ու մշուշ հորանջով*
*Գալարվեցին քո յերկնքում…*
*ու անցան։*

* *
*

*Փշեպատ, տամուկ*
*Քո փողոցներում*
*Հիմի մուրճերի*
*Կամքն է հորհրում։*

Եկել են հիմի
Արևառ որեր
Քո գլխին կարմիր
Դափնի վոլորել

Կանչնե՛ր, իմ յերկիր,
Երկաթե լեզվով
Կրկին ու կրկին
Թնդա յերգդ թող։

Շողում է դեմքիդ
Թախծի տեղ ժպիտ,
Թող քո հաղթ կրծքից
Տեքստիլներ խփի...

Դաշտերից անձայն,
Անձայն հորանջում
Տրակտորն է հիմի
Անուշ խրխնջում։

Թող վոր խրխնջա
Կամքդ հրշունչ ձի,
Կանչներ ու անձկով
Վառ գալիք հնձի...

1928 թ.

# ԳՅԱՓԻ ՔԵՌԻՆ

*Ջրերի հարածուփ յեռքին*
*Անմաս չէ Գյափի քեռին.*
*Շողշողուն արևը գրկին*
*Լողում է հույզերում կրկին…*

*Ջավոռում շառաչ…*
*ու հիմի*
*Ծարավ մռուշ, մռուշ հանդստի*
*Ալիքով հզոր արթնումի*
*Ահա նա… նետվել է նիստի*

*Բջիջում զրույց, զեկուցում…*
*Պայքար է հեռավոր ափին…*
*Սուզվում են… հուզվում… լուծում…*
*Նաստյան, Շալիկոն, Գյափին…*

*Թռչում է Մարոկկո, Պեկին*
*Գյափիի հոգին՝ անափ,*
*Արթնացող չին, ռիֆֆե սրտին*
*Սրսկում վրեժի նոր թափ:*

Տես, ղպրոց-ջան կա գյուղում
Բեկվել ե ցոլքը հյուղում.
Շեֆկոմում Գյափին ե խոսում
Նոր արխի միտքն ակոսում...

Որերի մրրկոտ յեռին
Անմաս չե Գյափի քեռին,
Շողշողուն արևը գրկին
Լողում ե հույզերում կրկին...

1925 թ.

# ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ

Իմ մրրկուն,
Շինված սրտից
Նախշուն,
Շարմող գարնան օրին
Վողջո՛ւյն...
Վողջո՛ւյն...
Աշխատանքի ժիր հերոսներ
Ձեզ՝
Բոլորին...

Ուր էլ լինիք—
Են ցրտաշունչ հանքահորում,
Թե դաշտյաներն կպած հլու,
Ուր դուք համառ
Անդուլ ջանքով
Ձեր քրտնաթոր հացն եք խլում...

Թող լինիք դուք
Մի նոր հիդրո կառուցելիս
Արևածին Սախսոնում,
Կամ թե Փարիզ

Բիրտ ֆաշիզմի ճիրաններում,
Ուր գոյության
Իմաստն է ձեր այլասերվում...

Ինչ անուն եք դուք ունենաք՝—
Թաթոս
Իվան
Թե չին կուլի,
Գիտեմ, վոր ձեր
Զարկով վիհեր
Կապանքը հին պիտի փլի...

... Ու կգան են
Օրերը հաղթ,
Յերբ մենք խրոխտ
Ու անսասան
Կարմիր թեւով
Կկամարենք աշխարհը նոր
Ու քրանքի բուրաստանին
Տեր կլինի
Ինքը՝
Մասսան...

Իմ մրրկուն
Հրկեզ սրտից

Նախշո՛ւն,
Հրշունչ Մայիս մեկին
Վողջո՛ւյն...
Վողջո՛ւյն...
Աշխատանքի ժիր հերոսներ
Ձեզ՝
Ամենքին...

1927 թ.

Վարդան Սիմոնյանը ծնվել է 1891 թ. Թիֆլիսի կաշվե գործարանում (նախկին Ադելխանովի) աշխատող խարազի ընտանիքում։ Նա նյութական սուղ պայմաններում, մի կերպ ավարտում է Ներսիսյան դպրոցն ու մտնում ուսուցչական ասպարեզ։ Վերջին տարիներս աշխատում է Վրաստանի պրոֆ-խորհրդում։ Վարդան Սիմոնյանը առաջին անգամ տպագրվել է մեր մամուլում 1923 թվին։

Նրա բանաստեղծությունները տպվել են մեր մի քանի ամսագրերում և ժողովածուներում, բայց գլխավորապես «Մարտակոչ» ու «Պրոլետար» օրաթերթերում։ Այս հրատարակությունը նրա առաջին գիրքն է։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0041714

Ι
6052

Մեկ Օրինակ

Գինը 15 կոպ.

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳ — Բանաստեղծություններ
2. ՄԱՐՏԻՆ — Պատմվածքներ
3. ՊԱՅԱՋԱՏ — «Հողաշեն»

## ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ — «Նորը»
2. ԲԱՆՎՈՐ ԱՄԻՐ — Պատմվածքներ
3. ՀՌ. ՊՈՂՈՍՅԱՆ — Բանաստեղծություններ
4. ՌՈՒԲ. ԱՂԱԲԱԲ — «Լիրիկա»
5. Գ. ԽԱԼԱԹ — Կոլեկտիվը